ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ստրասբուրգ, 1987թ. նոյեմբերի 26)

Սույն Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի դրույթները,

հիշեցնելով, որ, նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխան, «ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»,

նշելով, որ սույն Կոնվենցիայով նախատեսված մեխանիզմը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր հայտարարում են, որ իրենք հանդիսանում են 3-րդ հոդվածի խախտումից տուժածներ,

համոզված լինելով, որ ազատազրկված անձանց խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանությունը կարող է ուժեղացվել կանխարգելիչ բնույթի՝ այցելությունների վրա հիմնված ոչ դատական միջոցներով,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Գլուխ 1

Հոդված 1

Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման նպատակով ստեղծվում է Եվրոպական կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե): Կոմիտեն այցելությունների միջոցով ուսումնասիրում է ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ անհրաժեշտության դեպքում խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով:

Հոդված 2

Յուրաքանչյուր Կողմ, սույն Կոնվենցիային համապատասխան, իր իրավասության շրջանակներում թույլատրում է այցելություն ցանկացած վայր, որտեղ պահվում են պետական մարմնի կողմից ազատազրկված անձինք:

Հոդված 3

Կոմիտեն և շահագրգիռ Կողմի իրավասու մարմինները սույն Կոնվենցիան կիրառելիս համագործակցում են միմյանց հետ:

Գլուխ 2

Հոդված 4

1. Կոմիտեի անդամների թիվը հավասար է Կողմերի թվին:
2. Կոմիտեի անդամներն ընտրվում են բարոյական բարձր հատկանիշներ ունեցող, մարդու իրավունքների ասպարեզում իրենց իրազեկությամբ հայտնի կամ սույն Կոնվենցիայով ընդգրկվող բնագավառում մասնագիտական փորձ ունեցող անձանցից:
3. Արգելվում է միևնույն պետության քաղաքացի հանդիսացող երկու անձանց անդամությունը Կոմիտեին:
4. Կոմիտեի անդամները հանդես են գալիս իրենց անհատական ունակություններով: Նրանք անկախ և անկողմնակալ են և կարող են արդյունավետորեն իրագործել իրենց գործառույթները:

Հոդված 5

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդատվական վեհաժողովի բյուրոյի կողմից կազմված ցուցակից: Խորհրդատվական վեհաժողովում յուրաքանչյուր Կողմի ազգային պատվիրակությունն առաջադրում է երեք թեկնածու, որոնցից առնվազն երկուսը հանդիսանում են իր քաղաքացիներ:
2. Նույն ընթացակարգը պահպանվում է առաջացող թափուր տեղերի համալրման դեպքում:
3. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել միայն մեկ անգամ: Սակայն առաջին ընտրություններում ընտրված երեք անդամների լիազորությունների ժամկետը լրանում է երկու տարուց: Անդամները, որոնց լիազորությունների ժամկետը լրանում է առաջին երկամյա ժամկետն ավարտվելուն պես, վիճակահանությամբ որոշվում են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից՝ առաջին ընտրությունների ավարտից անմիջապես հետո:

Հոդված 6

1. Կոմիտեի նիստերը դռնփակ են: Քվորումը հավասար է Կոմիտեի անդամների մեծամասնությանը: Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա անդամների մեծամասնությամբ՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն:
2. Կոմիտեն մշակում է սեփական ընթացակարգային կանոնները:
3. Կոմիտեի քարտուղարությունն ապահովվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից:

Գլուխ 3

Հոդված 7

1. Կոմիտեն կազմակերպում է այցելություններ 2-րդ հոդվածում հիշատակված վայրեր: Բացի պարբերական այցելություններից, Կոմիտեն իրավունք ունի կազմակերպելու այնպիսի այցելություններ, ինչպիսիք անհրաժեշտ կգտնի՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից:

2. Որպես ընդհանուր կանոն՝ այցելություններն իրականացվում են Կոմիտեի ոչ պակաս, քան երկու անդամի կողմից: Կոմիտեն եթե անհրաժեշտ գտնի, կարող է օգտվել փորձագետների և թարգմանիչների ծառայություններից:

Հոդված 8

1. Կոմիտեն շահագրգիռ Կողմի կառավարությանը ծանուցում է այցելություն կատարելու մտադրության մասին: Տեղյակ պահելուց հետո Կոմիտեն իրավասու է ցանկացած ժամանակ այցելել 2-րդ հոդվածով նախատեսված ցանկացած վայր:

2. Կողմը, Կոմիտեի խնդիրներն իրականացնելու նպատակով, ապահովում է.

ա) մուտք իր տարածք և առանց սահմանափակման տեղաշարժվելու իրավունք,

բ) լիարժեք տեղեկատվություն ազատազրկված անձանց պահելու վայրերի մասին,

գ) մուտք ցանկացած վայր առանց սահմանափակումների, որտեղ պահվում են ազատազրկված անձինք, ներառյալ այդպիսի վայրերի ներսում առանց սահմանափակման տեղաշարժվելու իրավունքը,

դ) Կողմին մատչելի այլ տեղեկություն, որը Կոմիտեին անհրաժեշտ է իր խնդիրներն իրականացնելու համար: Այդպիսի տեղեկության որոնման ընթացքում Կոմիտեն պահպանում է ազգային օրենսդրության նորմերը և մասնագիտական էթիկայի կանոնները:

3. Կոմիտեն իրավունք ունի ազատազրկված անձանց հետ զրուցել մեկուսի:

4. Կոմիտեն իրավասու է ազատորեն հաղորդակցվել ցանկացած անձի հետ, ով, Կոմիտեի ենթադրությամբ, կարող է տրամադրել համապատասխան տեղեկություն:

5. Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է շահագրգիռ Կողմի իրավասու մարմիններին անհապաղ տեղեկացնել իր դիտողությունների մասին:

Հոդված 9

1. Բացառիկ հանգամանքներում շահագրգիռ Կողմի իրավասու մարմինները կարող են Կոմիտեին վերջինիս կողմից այցելության համար մատնանշված կոնկրետ ժամանակի և կոնկրետ վայրի վերաբերյալ առարկություններ ներկայացնել: Նման առարկություններ կարող են ներկայացվել՝ ելնելով միայն ազգային պաշտպանության, հասարակական անվտանգության նկատառումներից՝ ազատազրկման վայրերում լուրջ անկարգություններ, անձի բժշկական վիճակի կամ ծանր հանցագործություն կատարելու կապակցությամբ անհետաձգելի հարցաքննություն կատարելու դեպքերում:

2. Նման առարկության դեպքում Կոմիտեն և Կողմն անմիջապես սկսում են խորհրդակցությունները՝ իրադրությունը շտկելու և Կոմիտեի կողմից իր

պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու համար: Այդ միջոցառումները կարող են ներառել որևէ անձի այլ վայր փոխադրելը, ում Կոմիտեն մտադիր է այցելել: Քանի դեռ այցելությունը չի կայացել, Կողմը պարտավոր է Կոմիտեին տեղեկություններ տրամադրել Կոմիտեին հետաքրքրող ցանկացած անձի մասին:

Հոդված 10

1. Յուրաքանչյուր այցելությունից հետո Կոմիտեն զեկուցագիր է կազմում այցելության ընթացքում ի հայտ բերած փաստերի վերաբերյալ՝ հաշվի առնելով բոլոր դիտողությունները, որոնք Կոմիտեին կարող էր տրամադրած լինել շահագրգիռ Կողմը: Կոմիտեն վերջինիս ուղարկում է զեկուցագիր, որը ներառում է Կոմիտեի տեսանկյունից անհրաժեշտ բոլոր հանձնարարականները: Կոմիտեն կարող է խորհրդակցել Կողմի հետ՝ անհրաժեշտության դեպքում ազատազրկված անձանց պաշտպանությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:

2. Եթե Կողմը խուսափում է համագործակցությունից կամ հրաժարվում է Կոմիտեի հանձնարարականների հիման վրա իրադրությունը շտկելուց, Կողմին իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն ընձեռելուց հետո Կոմիտեն կարող է անդամների երկու երրորդի մեծամասնությամբ տվյալ հարցի վերաբերյալ հրապարակային հայտարարություն անելու որոշում կայացնել:

Հոդված 11

1. Այցելության կապակցությամբ Կոմիտեի հավաքած տեղեկությունը, զեկուցագիրը և շահագրգիռ Կողմի հետ նրա խորհրդակցությունները կրում են գաղտնի բնույթ:

2. Կոմիտեն կարող է շահագրգիռ Կողմի խնդրանքով ցանկացած ժամանակ հրապարակել իր զեկուցագիրը՝ շահագրգիռ կողմի ցանկացած մեկնաբանությամբ հանդերձ:

3. Այնուամենայնիվ, անհատական բնույթի տվյալները չպետք է հրապարակվեն առանց շահագրգիռ անձի հստակ համաձայնության:

Հոդված 12

11-րդ հոդվածով սահմանված գաղտնիության կանոնների համաձայն՝ Կոմիտեն յուրաքանչյուր տարի Նախարարների կոմիտեին ներկայացնում է իր գործունեության ընդհանուր հաշվետվություն, որը հանձնվում է Խորհրդատվական վեհաժողովին և հրապարակվում է:

Հոդված 13

Կոմիտեի անդամները, փորձագետները և Կոմիտեին աջակցող այլ անձինք պարտավոր են ինչպես իրենց աշխատելու ժամանակամիջոցում, այնպես էլ դրանից հետո գաղտնի պահել իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ իրենց հայտնի դարձած փաստերը և տեղեկությունները:

Հոդված 14

1. Կոմիտեին աջակցող անձանց անունները պետք է նշված լինեն 8-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան Կոմիտեի կողմից ուղարկվող ծանուցագրում:

2. Փորձագետները գործում են Կոմիտեի ցուցումներին համապատասխան և լիազորված են վերջինիս կողմից: Նրանք պետք է սույն Կոնվենցիայով ընդգրկվող բնագավառներում հատուկ գիտելիքներ և փորձ ունենան, պետք է լինեն նույնքան անկախ, անկողմնակալ և ընդունակ՝ արդյունավետորեն կատարելու իրենց գործառույթները, ինչպես Կոմիտեի անդամները:

3. Որպես բացառություն՝ Կողմը կարող է հայտարարել, որ փորձագետին կամ Կոմիտեին աջակցող այլ անձի չի թույլատրվում մասնակցել իր իրավասության շրջանակներում գտնվող համապատասխան վայր այցելությանը:

Գլուխ 4

Հոդված 15

Յուրաքանչյուր Կողմ Կոմիտեին հայտնում է այն մարմնի անվանումը և հասցեն, ում իրավասության շրջանակներում գտնվում է կառավարության անունով ստացված ծանուցագրերի ընդունումը, ինչպես նաև՝ այն փոխգործակցող պաշտոնատար անձի անունը, ով կարող է նշանակվել վերջինիս կողմից:

Հոդված 16

Կոմիտեն, նրա անդամները և 7-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակված փորձագետներն օգտվում են սույն Կոնվենցիայի հավելվածով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիությունից:

Հոդված 17

1. Սույն Կոնվենցիան չի խախտում ներպետական օրենսդրության դրույթները կամ միջազգային համաձայնագրերը, որոնք առավել լայն պաշտպանություն են ապահովում ազատազրկված անձանց համար:

2. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի մարմինների իրավասության կամ սույն Կոնվենցիայով Կողմերի ստանձնած պարտավորությունների սահմանափակում կամ նվազեցում:

3. Կոմիտեն չի այցելում այն վայրերը, ուր պարբերաբար և արդյունավետորեն այցելում են հովանավոր-տերությունների և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները կամ պատվիրակությունները՝ 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի և 1977 թվականի հունիսի 8-ի Լրացուցիչ արձանագրությունների հիման վրա:

Գլուխ 5

Հոդված 18

Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերագիրը, ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթղթերն ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի անդամ յոթ պետությունների՝ սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները ստանձնելուն համաձայնություն տալու օրից եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա հաջորդ օրը՝ 18-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները ստանձնած անդամ պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթն ի պահ տալու օրից եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա հաջորդ օրը:

Հոդված 20

1. Յուրաքանչյուր պետություն իրավասու է ստորագրման կամ վավերագիրը կամ ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթն ի պահ տալու ժամանակ որոշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր պետություն իրավասու է ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի գործողությունը տարածել հայտարարությունում նշված ցանկացած տարածքի վրա: Այդ տարածքի նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունը գլխավոր քարտուղարի ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Նախորդ երկու կետերին համապատասխան կազմված հայտարարությունը կարող է հետ վերցվել հայտարարությունում նշված ցանկացած տարածքի նկատմամբ՝ գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում այդ ծանուցագիրը գլխավոր քարտուղարի ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 21

Սույն Կոնվենցիայի դրույթների նկատմամբ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

Հոդված 22

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Կոնվենցիան՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

2. Նման դադարեցումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցագիրը գլխավոր քարտուղարի ստանալու օրից տասներկուամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 23

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին տեղեկացնում է.

ա) յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ) յուրաքանչյուր վավերագիր, ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթ ի պահ տալու մասին,

գ) Կոնվենցիան 19-րդ և 20-րդ հոդվածներին համապատասխան ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,

դ) սույն Կոնվենցիային առնչվող յուրաքանչյուր այլ գործողության, ծանուցման կամ հաղորդման մասին՝ բացառությամբ 8-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան կատարվող գործողությունների:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1987 թվականի նոյեմբերի 26-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերը հավասարապես վավերական են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի վավերացված պատճենները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Արտոնություններ և անձեռնմխելիություն
(Հոդված 16)

1. Սույն հավելվածի նպատակներից ելնելով՝ Կոմիտեի անդամների վերաբերյալ հղումները տարածվում են 7-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակվող փորձագետների վրա:

2. Կոմիտեի անդամներն իրենց պարտավորությունների կատարման ժամանակ և իրենց պարտավորությունների կատարման կապակցությամբ կա-տարվող ուղևորությունների ընթացքում օգտվում են հետևյալ արտոնություններից և անձեռնմխելիությունից.

ա) անձեռնմխելիություն կալանավորումից կամ ձերբակալումից և անձ-նական բեռի վրա կալանք դնելուց, ինչպես նաև, պաշտոնեական կարգավիճակում նրանց կողմից ասված կամ գրված խոսքերի և արված գործողությունների առնչությամբ, անձեռնմխելիություն ցանկացած իրավական գործընթացից,

բ) նրանց վրա չի տարածվում իրենց բնակության երկիր մուտք գործելու և երկրից դուրս գալու ազատ տեղաշարժի որևէ սահմանափակում, նաև՝ այն երկիր մուտք գործելու և երկրից դուրս գալու որևէ սահմանափակում, որտեղ նրանք կատարում են իրենց պարտականությունները, կամ այն երկրում, որտեղով նրանք անցնում են իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ, որպես օտարերկրացի հաշվառելու որևէ սահմանափակում:

3. Պարտականությունների կատարման կապակցությամբ կատարվող ուղևո-րությունների ընթացքում Կոմիտեի անդամներին մաքսային և արտարժութային հսկողության ոլորտում տրամադրվում են հետևյալ արտոնությունները.

ա) իրենց կառավարության կողմից՝ նույնպիսի պայմաններ, որոնք տրամադրվում են ժամանակավոր պաշտոնեական պարտականություն կատարելու կապակցությամբ արտասահման մեկնող բարձրաստիճան պաշտոնատար անձանց,

բ) այլ Կողմերի կառավարությունների կողմից՝ նույնպիսի պայմաններ, որոնք տրամադրվում են օտարերկրյա կառավարությունների ներկայացուցիչներին՝ ժամանակավոր պաշտոնեական պարտականություններ կատարելու ընթացքում:

4. Պաշտոնեական և աշխատանքային փաստաթղթերը, այնքանով, որքանով դրանք վերաբերում են Կոմիտեի գործերին, անձեռնմխելի են:

Պաշտոնական թղթակցությունը և պաշտոնական այլ հաղորդակցությունները չեն կարող ուշացվել կամ ենթարկվել գրաքննության:

5. Կոմիտեի անդամներին խոսքի լրիվ ազատություն և իրենց պարտա-կանությունների կատարման ընթացքում լրիվ անկախություն ապահովելու նպատակով, պաշտոնեական դրությունից ելնելով, նրանց կողմից ասված կամ գրված խոսքերի և արված գործողությունների նկատմամբ ցանկացած իրավական գործընթացի առնչությամբ անձեռնմխելիությունը պահպանվում է՝ անկախ այդ անձանց կողմից պարտականությունների կատարումը դադարեցնելու հանգամանքից:

6. Արտոնությունները և անձեռնմխելիությունը Կոմիտեի անդամներին տրամադրվում են ոչ թե նրանց անձնական շահի, այլ պարտականությունների անկախ կատարման նպատակով: Միայն Կոմիտեն է իրավասու իր անդամներին զրկել անձեռնմխելիությունից. Կոմիտեն ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է անձեռնմխելիությունից զրկել անդամին, եթե, իր կարծիքով, անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, և եթե զրկումը վնաս չի պատճառում այն նպատակներին, որոնց իրականացման համար անձեռնմխելիությունը տրամադրվում է:

Թարգմանությունը տրամադրել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Արձանագրություն թիվ 1

Խոշտանգումների — անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին եվրոպական կոնվենցիայի

Ստրասբուրգ, 4.XI.1993

1987 թվականի նոյեմբերի 26-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Խոշտանգումների — անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) սույն Արձանագրությունը ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի ոչ անդամ պետություններին պետք է թույլատրվի միանալու Կոնվենցիային Նախարարների կոմիտեի հրավերով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին ավելացվում է հետևյալ ենթապարբերությունը.

«Երբ Կոմիտեի անդամ պետք է ընտրվի Եվրոպայի խորհրդի ոչ անդամ պետության համար, Խորհրդատվական ասամբլեայի բյուրոն հրավիրում է այդ պետության Խորհրդարանին՝ ներկայացնել երեք թեկնածու, որոնցից առնվազն երկուսը պետք է լինեն իր քաղաքացիները: Նախարարների կոմիտեի կողմից ընտրությունը տեղի է ունենում շահագրգիռ Կողմի հետ խորհրդակցելուց հետո»:

Հոդված 2

Կոնվենցիայի 12-րդ հոդվածը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.

«11-րդ հոդվածի գաղտնիության կանոնների պահպանմամբ Կոմիտեն ամեն տարի իր գործունեության վերաբերյալ ընդհանուր հաշվետվություն է ներկայացնում Նախարարների կոմիտեին, որը փոխանցվում է Խորհրդատվական Ասամբլեայի — Կոնվենցիայի Կողմ հանդիսացող Եվրոպայի խորհրդի ոչ անդամ ցանկացած պետության — հրապարակվում է»:

Հոդված 3

Կոնվենցիայի 18-րդ հոդվածի տեքստը դառնում է այդ հոդվածի 1-ին կետը — լրացվում է հետևյալ երկրորդ կետով.

«2. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի ոչ անդամ ցանկացած պետության՝ միանալու Կոնվենցիային»: Թարգմանությունը տրամադրել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Թարգմանությունը տրամադրել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Հոդված 4

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ կետում «անդամ» բառը հանվում է, — «կամ հաստատման» բառերը փոխարինվում են «հաստատման կամ միացման» բառերով:

Հոդված 5

Կոնվենցիայի 20-րդ հոդվածի 1-ին կետում «կամ հաստատման» բառերը փոխարինվում են «հաստատման կամ միացման» բառերով:

Հոդված 6

1. Կոնվենցիայի 23-րդ հոդվածի ներածական նախադասությունը շարադրվում է հետ—յալ խմբագրությամբ. «Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Կոնվենցիայի Կողմ հանդիսացող Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին — ցանկացած ոչ անդամ պետության ծանուցում է»:

2. Կոնվենցիայի 23-րդ հոդվածի «բ» կետում «կամ հաստատման» բառերը փոխարինվում են «հաստատման կամ միացման» բառերով:

Հոդված 7

1. Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար, որոնք կարող են արտահայտել իրենց համաձայնությունը՝ պարտավորված լինելով՝

ա. ստորագրմամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանի,

կամ

բ. ստորագրմամբ՝ վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանով, որին հետ—ում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը:

2. Վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ կտրվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 8

Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի այն օրվանից երեք ամիս ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Կոնվենցիայի բոլոր Կողմերը համաձայնություն կհայտնեն ստանձնելու Արձանագրությամբ նախատեսած պարտավորությունները՝ 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Թարգմանությունը տրամադրել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Հոդված 9

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին՝

ա. յուրաքանչյուր ստորագրման մասին.

բ. յուրաքանչյուր վավերագիր, ընդունման կամ հաստատման փաստաթուղթ ի պահ տալու մասին.

գ. 8-րդ հոդվածին համապատասխան սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

դ. սույն Արձանագրության հետ կապված ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայումն վերոշարադրյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1993 թվականի նոյեմբերի 4-ին՝ ֆրանսերեն — անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, որը ի պահ կտրվի Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության:

Թարգմանությունը տրամադրել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Արձանագրություն թիվ 2

Խոշտանգումների — անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի

Ստրասբուրգ, 4.XI.1993

1987 թվականի նոյեմբերի 26-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Խոշտանգումների — անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ—՝ Կոնվենցիա) սույն Արձանագրությունը ստորագրած պետությունները,

համոզված լինելով Խոշտանգումների — անմարդկային կամ արժանապատ-վությունը նվաստացնող վերաբերմունքի — պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոմիտեի (այսուհետ—՝ Կոմիտե) անդամներին երկրորդ անգամ վերընտվելու հնարավորություն տալու նպատակահարմարության հարցում,

նկատի ունենալով նա— Կոմիտեի անդամության կանոնավոր նորացումը երաշխավորելու անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետ—յալի մասին.

Հոդված 1

1. 5-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրվում է հետ—յալ կերպ.

«Նրանք կարող են վերընտրվել երկու անգամ»:

2. Կոնվենցիայի 5-րդ հոդվածը լրացվում է հետ—յալ 4-րդ — 5-րդ կետերով.

«4. Հնարավորության դեպքում Կոմիտեի անդամների կեսի երկու տարին մեկ նորացումը ապահովելու նպատակով Նախարարների կոմիտեն կարող է որոշել, որ, մինչ— հաջորդ ընտրությանն անցնելը, ընտրվելիք անդամների մեկ կամ ավելի անդամների պաշտոնավարման ժամկետը կամ ժամկետները կլինեն այլ, քան չորս տարին, բայց ոչ ավել, քան վեց — ոչ պակաս, քան երկու տարին:

5. Այն դեպքերում, երբ մեկից ավելի պաշտոնավարման ժամկետ է ներառված, — Նախարարների կոմիտեն կիրառում է նախորդ կետը, պաշտոնավարման ժամկետների բաշխումը կիրականացվի Գլխավոր քարտուղարի կողմից ընտրությունից անմիջապես հետո կատարվող վիճակահանությամբ»:

Հոդված 2

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար Կոնվենցիան ստորագրած պետությունների կողմից, որոնք կարող են արտահայտել իրենց համաձայնությունը՝ պարտավորված լինելով՝

ա. ստորագրմամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանի, կամ

բ. ստորագրմամբ՝ վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանով, որին հետ—ում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը:

2. Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի այն օրվանից երեք ամիս ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Կոնվենցիայի բոլոր Կողմերը համաձայնություն կհայտնեն ստանձնելու Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունները՝ 2-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հոդված 4

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին — Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ոչ անդամ պետություններին՝

ա. ցանկացած ստորագրման մասին.

բ. ցանկացած վավերագրի, ընդունման կամ հաստատման փաստաթուղթ ի պահ տալու մասին.

գ. 3-րդ հոդվածին համապատասխան սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

դ. սույն Արձանագրության հետ կապված ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայումն վերոշարադրյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1993 թվականի նոյեմբերի 4-ին՝ ֆրանսերեն — անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, որը ի պահ կտրվի Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության: